

ПРИЛОЖЕНИЕ

ՇԵՆԻՍԻ V ԴԱՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Երևանի պետական համալսարանի հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի արշավախումբը չափագրության և հետազոտական վերականգնման համար 1985թ. սկսեց Շենիկի V դարի եկեղեցու պեղումները: Աշխատանքները կատարվում էին հայկական հուշարձանների պահպանության ընկերության միջոցներով:

Եկեղեցին գտնվում է ՀՀ Թալինի շրջանի (ներկալիս Թալինի ենթադրաբար) Արագածոտնի մարզի հյուսիսային մասում՝ Մատտառու գյուղից 5 կմ հյուսիս, նախկին Շենիկ (Սագարջու) լքված գյուղատեղում: Բազի V դարի եկեղեցուց, գյուղի հարավային մասում են VII դարում կառուցված Ս.Մարգիս եկեղեցու ավերակները:

Եկեղեցին վերջին անգամ նորոգվել է 1900-ական թվականներին²¹⁷: Գյուղի շրջակայքում կան նաև հնագույն շարվածքների ետաքեր, կոթողների բեկորներ, խաչքարեր, որոնք փաստում են վայրի հնագիտական կարևորությունը: V դարով թվագրվող եկեղեցու ավերակները գտնվում են գյուղի թիկունքում բարձրացող բարձր բլրի լանջին: Եկեղեցու շուրջը տարածվում է բավական ընդարձակ գերեզմանատունը՝ հիմնականում միջնադարյան կառավարած թաղամասերով: Եկեղեցու մասին հիշատակություններ և նկարագրություններ հանդիպում են Ղևոնդ Ալիշանի և Թորոս Թորամանյանի երկերում:²¹⁸ Հետագայում այն ինչ որ չափով ուսումնասիրվել է հայկական ճարտարապետության վաղ միջնադարյան հուշարձանները լուսաբանելու կապակցությամբ²¹⁹: Եկեղեցին կիսավեր է, տաանց ծածկի, պատերը որոշ չափով կրամ են ուշ նորոգման հետքեր: Հատկապես արևմտյան մուտքը, որի քարավորի և պատերի շարվածքի շատ քարեր թափվել են, ենթակա է փնման վտանգի: Եկեղեցու ներսն ամբողջությամբ լցված էր հողով: Խորանի մոտ է Շենիկի վերջին քահանայի մեծ տապանաքարը:

Նախկինում, եկեղեցու շրջակայքում, հանրապետության նախարարների խորհրդին առընթեր Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման և օգնագործման վարչության Երևանի հատուկ գրտա-արտադրական արվեստանոցն իրականացրել մաքրման որոշ աշխատանքներ: Սեր գլխավորապես արշավախումբը ձեռնառելից եկեղեցու միջին պեղման գործը: Ներսում հողը մաքրելու ժամանակ, բացված էին թողարկի եղի մեջ դրված մանկական թաղումներ, եկեղեցուն սլառականող սրբատաշ քարեր: Հողը մաքրելուց հետո բացվեց ամբողջությամբ պահպանված եկեղեցու առաջին ստրահատակը: Այն շարված է կարմիր տուֆից կտրված հավասարակողմ սղիկներով: Արևմտյան մուտքի մոտ սաղահատակը խախտված է այնպեղ կատարված թաղումների պատճառով: Թաղումներից գառ, հողի միջից գտնվեցին զարգացած միջնադարին պատկանող եասարակ և ջնարակած խեցեղենի մնացորդներ: Պեղումներով բացվեց նաև եկեղեցու հարավային մուտքը, որը փակված էր եկեղեցու թաղի երկու քարերով (նկ. 32): Կառույցի ներսում գտնվեց նաև վառ կարմիր տուֆակերա քառակող կոթող: Կոթողի սրահպանված չափերն են 75X32 սմ: Կոթողի նիստերից մեկին Մարիամի ելնդավոր քանդակն է: Աստվածամայրը լուսապսակով է՝ մանուկ Հիսուսը գրկին: Կրում է երկար հագուստ: Այն կրծքի մասում ծալքեր ունի: Հատկապես ընդգծված ու արտահայտիչ են Աստվածամոր այքերը: Կոթողի մյուս նիստերի քանդակները չեն պահպանվել:

Եկեղեցու ավագ խորանի հարավային մասում գտնված՝ որմից ընկած քարերից մեկի վրա, IV-V դդ. քնորոշ հավասարաթև խաչ է քանդակված (նկ. 33):

217 Ը. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմություն, հ.2, Երևան, 1948, էջ 139:

218 Ղևոնդ Ալիշան, Այրարատ, բնաշխարհ Դայաստանայց, Վենետիկ, 1890, էջ 134: Անվանի հայագետի վկայությամբ 1840-50-ական թթ. Ալաշկերտից գաղթած և Շենիկում եաստառված գյուղացիները նորոգել են ս.Աարգիս եկեղեցին, այն վերանվանելով ս.Պովեանենս: Տե՛ս նաև Ը. Թորամանյան, նշվ. աշխ. էջ 139:

219 Վ.Դարությունյան, Հայկական ճարտարապետություն, Երևան, 1992, էջ 78 (նկ.4), 156:

Եկեղեցա ներսում կատարված աշխատանքներից զտո՞ւ, կառույցը պեղվեց նաև արտաքուստ: Հարավային մասում բացվեց հռաշար ումնտեհեցը (նկ. 34): Նրա երկրորդ շարքի հավասարաթյամբ բացվեցին իրար վրա գեղեղված բազմաթիվ քսաքաններ, որոնք բացի մեկից, որևէ իր չեն պարունակում: Այստեղ՝ կմախքի մոտ գտնվեցին տալիքո, սարդիոնի, լազուրիտի, մածուկի տուրքներ, որոնք ռմբաձև են և սեզմենաավոր: Գտնվել են նաև երկաթից պատրաստված երկու օձազլախ ապարանջաններ: Ապարանջանները կենարոնում և օձերի աչքերի տեղում ունեն յոթիկներ, ուր հավանաբար ագուցվել են գունավոր քարեր: Ապարանջաններն իրենց ձևով կրկնում են Հայաստանի վաղ շրջանի դասրարաններից գտնվածներին: Այս իրողությունը հավանաբար պետք է վերագրել դարերի խորքում սկզբնավորված ավանդույթներին: Եկեղեցա արևելյան արտաքին կողմում կատարված պեղումներից պարզվեց, որ այդ հատվածում եկեղեցին որմնաձևից չունի: Փաստորեն կառույցը հիմնված է ուղղակի գետնի վրա: Եկեղեցու շրջակայքը մաքրելու ժամանակ նույնպես գտնվեցին հասարակ և ջնարկած խեցեղենի քեկորներ, որոնք համաժամանակյա են կառույցի ներսում գտնվածներին: Բացի կենցաղային խեցեղենից, այստեղ գտնվեցին նաև V դարին պատկանող շինարարական խեցու քեկորներ: Կղմինդրը կարմիր գույնի է և հավանաբար կիրառվել է տանիքը ծածկելու համար: Գտածո կղմինդրները կարևոր են V դարում կառուցված բազիլիկ եկեղեցիների ծածկի վերականգնման հարցերը լուծելու համար: Եկեղեցու որմերին և պեղումների ժամանակ հանված քարերի վրա արձանագրությունների հետքեր չեն գտնվել: